

ի հետ նորա եղեալ՝ զնացեալ ձայնեցին զՄարտիրոս վարդապետն աչակերտ Աստուածատուր վարդապետին Երուսաղէմայ եւ զԵրուսաղէմացիքն որք կային սոքա ի յեկեղեցին Աստուածածնայ՝ բերել ետուր եւ Պասեքն ընդ նոսա արաւ։ Օրս մեր եկեղեցին Թագէոս<sup>1)</sup> վարդապետն որ կայր՝ արձակման ժամուն զսուրբ նշանն հանեց եւ խաչահանգիստ արաւ։

Բչի օրս (7 Ապրէլ) Մեռելոց եւ Աւետիք Սուրբ Աստուածածնին։ Գնացի ի մեր ժամն եւ թապախ բռնեցի էջմիածնայ, եւ յետոյ զնացի ի Սուրբ Նիկողոս, եւ Մղտեսին մեր մէկ քանի մարդ ժողովեց եւ զնացաք ի Մարտիրոս վարդապետին քով շնորհաւորել զԶատիկն. եւ յետոյ զնացաք ի Երուսաղէմացոց քովն, եւ անտի ելեալ զնացի ի հետ Մղտեսուն ի տուն, եւ ձայնեցին զմեզ ի տուն հօրքուրիս եւ ելեալ զնացաք ի տուն եւ նստեալ պահ մի ի հետ նոցա եւ ննջեցաք. եւ զնաց Մղտեսին ի տունս իւր. եւ յետ ննջելոյն նստաք պահ մի եւ երեկոյացաւ եւ զնացաք ի ժամ ի հետ սոցա. եւ յետ ժամուն զնացաք ի Վարդապետին քով եւ նստաք ի տեղն ոչ սակաւ. եւ անտի ելեալ հետ Մղտեսուն, ձայնեցի զՄղտեսին եւ ոչ եկն, եւ ես զնացի ի տուն, եւ Տէրտէրն եկաւ եւս եւ պահ մի նստաւ, եւ ելեալ զնաց քնիլ զի խոնջեալ էր՝ եւ կեալ ի գերեզմանացն. եւ մեք շատ նստեալ, եւ յետոյ ելաք մեք եւս զի անցեալ էր հաւախօսն։ Օրս Ղարակեօզի աղբօր Յովանէսին կինն մեռաւ՝ տղայոց տէր, ժողովուրդ էսիլին, որ էր յառաջ Տէր Գրիգորին վաղջանելոյ։

Գչի օրս (8 Ապրէլ) Ղալաթու իշխանքն եկեալ՝ զՎարդապետն տարան ի յԱստուածածին ի պատիւ։ Եւ առաւօտուս զհացն ընդ նոսա կերայ ի հօրքուրանցն եւ

1) Թաթէոս.